ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԱՇԱՐԺՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով ազատ առեւտրի գոտու ստեղծման մասին 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Համաձայնագրի եւ դրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 1999 թվականի ապրիլի 2-ի՝ Արձանագրության դրույթներով,

ելնելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից եւ Կողմերի ազգային օրենսդրությունների կանոններից ու հիմքերից,

ի զարգացումն 1995 թվականի փետրվարի 10-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի ընդունած Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մաքսային օրենսդրությունների հիմքերի,

ձգտելով փոխշահավետ առեւտրատնտեսական հարաբերությունների հետագա ընդլայնմանը,

ընդունելով ազատ առեւտրի ռեժիմի արդյունավետ գործունեության ապահովման անհրաժեշտությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրում կիրառվում են 1995 թվականի փետրվարի 10-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի ընդունած Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մաքսային օրենսդրությունների հիմքերում օգտագործվող հասկացությունները:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի նպատակն է.

Կողմերի միջեւ տեղաշարժվող ապրանքների մաքսային ձեւակերպման եւ մաքսային հսկողության պարզեցված կարգի սահմանում,

ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներից ծագող ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգերի միասնականացում եւ պարզեցում (24.09.1993թ. ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի Որոշմամբ հաստատված ապրանքների ծագման
երկրի որոշման Կանոններին եւ 18.10.1996թ. ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի Որոշմամբ 9-րդ կետի փոփոխված խմբագրությանը համապատասխան), առանց վնաս
հասցնելու նշված պետությունների յուրաքանչյուրի ազգային շահերին:

ՀՈԴՎԱԾ 3

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Կողմերի յուրաքանչյուրի կողմից՝ ազատ առեւտրի գոտու ստեղծման մասին 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Համաձայնագրի եւ դրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 1999 թվականի ապրիլի 2-ի՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու պայմանով:

2. Սույն Համաձայնագիրը կիրառվում է ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային տարածքներից ծագող եւ ազատ տեղաշարժման համար բաց թողնման մաքսային ռեժիմի ներքո դրվող ապրանքների նկատմամբ:

3. Սույն Համաձայնագիրը չի կիրառվում ապրանքների նկատմամբ որոնք.

վերաբերում են հատուկ բեռներին, ռազմական նշանակության արտադրանքին եւ

երկակի կիրառման ապրանքներին,
ակցիզներով հարկվում են ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում:
Կողմերը փոխանակում են ակցիզներով հարկվող ապրանքների ցուցակները:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը սահմանում են սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքների մաքսային ձեւակերպման պարզեցված կարգ ԱՊՀ մասնակից պետությունների
մաքսային տարածքներ ներմուծելու դեպքում:

ՀՈԴՎԱԾ 5

Ապրանքների մաքսային ձեւակերպման պարզեցված կարգը ներառում է.
մաքսային բեռնային հայտարարագրերի միասնականացված բլանկների կիրառումը,
մաքսային ուղեւորային հայտարարագրերի միասնականացված բլանկների կիրառումը,
ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային ձեւակերպման միասնականացված կանոնների կիրառումը:
Ապրանքների մաքսային ձեւակերպման միասնականացված կարգը նախատեսում է մաքսային ձեւակերպման եւ հսկողության փաստաթղթերի փոխադարձ ճանաչում:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը, երկկողմ համաձայնագրերի հիման վրա, մաքսային սահմաններում ստեղծում են բաց թողնման համատեղ կետեր՝ մաքսային հսկողության եւ մաքսային ձեւակերպման իրականացման համար:

ՀՈԴՎԱԾ 7

Ապրանքների մաքսային ձեւակերպումը կատարվում է ԱՊՀ մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 8

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային տարածքներով ապրանքների փոխադրումը մինչեւ նշանակման կետը իրականացվում է մաքսային հսկողության ներքո ապրանքների տեղափոխման ազգային կանոններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 9

Մաքսային մարմնի կողմից, որի գործունեության տարածաշրջանում են գտնվում ապրանքներ ստացողները, սահմանած մաքսային ձեւակերպման վայրեր ապրանքների ժամանումից հետո, դրանք տեղադրվում են մաքսային պահեստներում կամ մաքսային հսկողության ներքո այլ վայրերում, որոնք սահմանում է մաքսային մարմինը:

ՀՈԴՎԱԾ 10

Մաքսային հայտարարագրում նշված տվյալների հավաստիության հաստատման համար, մաքսային մարմինը իրավունք ունի պահանջել մաքսային հսկողության համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերի եւ տվյալների ներկայացում:
Կողմերը ձգտում են առավելագույնս կրճատել նման փաստաթղթերի եւ տվյալների ցանկերը, ինչպես նաեւ օպտիմալացնել դրանց տրամադրման պայմանները:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում այլ միջազգային պայմանագրերի դրույթները, որոնց մասնակիցներ են Կողմերը հանդիսանում:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից: Անհրաժեշտ ընթացակարգերը ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահին հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 13

Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին փաստաթղթերով:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն անգամ 5 տարով, եթե Կողմերը այլ որոշում չընդունեն:
Կողմերից յուրաքանչյուրը կարող դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին՝ նախնականորեն կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման հետ կապված վիճելի հարցերը կարգավորվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով վիճելի հարցերը լուծելու անհնարինության դեպքում Կողմերը դիմում են Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարան կամ այլ միջազգային արբիտրաժային դատարաններ:

ՀՈԴՎԱԾ 16

Բոլոր Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ ավանդապահին այդպիսի միացման մասին փաստաթղթերի հանձնման միջոցով: Միացումը համարվում է ուժի մեջ մտած ավանդապահի կողմից նման միացման Կողմերի համաձայնության մասին վերջին ծանուցումը ստանալու օրվանից 30 օր հետո:

Կատարված է Յալթա քաղաքում 1999 թվականի հոկտեմբերի 8-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը ստորագրելիս Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է առաջարկություններ. "1. 3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. "Կողմերը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում փոխանակում են ակցիզներով հարկվող ապրանքների ցանկերը, ինչպես նաեւ տեղեկացնում են միմյանց այդ ցանկերում բոլոր փոփոխությունների մասին":

2. 7-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. "Ապրանքների մաքսային ձեւակերպումը կատարվում է ԱՊՀ մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան":

3. 13-րդ հոդվածի վերջում ավելացնել. "... եւ որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով նախատեսված կարգով"":

** Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 27-ից: